

3. The treatment of armenians in the Ottoman Empire 1915—1916. Documents presented to Viscount Grey... by Viscount Bryce. London 1916. (xlii+684).
4. Henry Barby, Au pays de Verouvante. Paris 1917.
2. *Բազուկցի երգ. հաւատ. սր. Ստեփան Տրգրանեանից Արսէն վ. Բ միջոցով.*
1—2. Материалы для истории факультета восточныхъ языковъ. Томъ I и II СІВ. 1905—6 г. г.
3—4. Тексты и разысканія по армяно—грузинской филологіи. Кн. I и V. СІВ. 1900—3 г. г.
5. М. В. Никольскій, Клинообразная надпись изъ Ганги— Тапа. М-ва 1894 г.
6. Г. А. Эзовъ, Начало сношеній Эчм. пат. престола съ русс. правит., Тиф. 1901 г.
7—8. Dr. Eduard Eichard, Reise auf dem Caspischen Meere und in dem Kaukasus (1825—26). I Band. I und II Abtheilung. Stuttgart 1834—36.
9. M. Brosset, Catalogue de la bibliothèque d' Edchmiadzju. S.— Pet. 1840.
- է. Հայկ Աճէմեան, Սղապսակ իշխանի Թիֆ.—1916 թ.
Նուիրարեբողներին յայանուում է խորին շնորհակալութիւնս
Մայր Աթոռի Մատենադարանի պաշտօնեայ
Սարգիս Զ. Քոփալեան
28 յուլիսի 1917 թ.
Ս. Էջմիածին



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Խ Ն

Ա Ր Ե Ի Մ Տ. Ի Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ի Կ Ո Ղ Մ Է

Աստրախանի թեմի առաջնկրդ Գեր. Մեսրոբ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ, Աստրախանի թեմի հայութիւնը հանգանակած էր գումար մը, որը թեմական ժողովի որոշմամբ դրուած է Արեւմտահայ խորհրդիս արամադրութեան տակ:

Այս առթիւ Սրբազան առաջնորդը մեզ ուղարկած է հետեւեալ գրութիւնը.—

«Աստրախան քաղաքում և թեմի մի մասում հանգանակել եմ գումարներ յօգուտ թիւքահայ դպրեականների և քրտերի մօտ եղած գերիների ազատման համար: Գերիների համար ստա-

ցել եմ երեք հազար ինն հարիւր տասն և մէկ բուրլի (3911 բ.), իսկ գաղթականների համար հարիւր եօթը հազար չորս հարիւր երեսուն երեք բուրլի (107,433) 40 կոպ.: Գերիների գումարը ամբողջութեամբ հանգանակուած է Աստրախան քաղաքում, իսկ գաղթականների համար հետևեալ քաղաքներից. —

	Ռ.	Կ.
1. Կրասնավոտսկի հայ համայնք	4370	—
2. Րէզէնի » »	7420	—
3. Եօլաթան » »	701	—
4. Արաիկ » »	1477	—
5. Թախտարազար » »	2000	—
6. Նամանկան » »	3500	—
7. Թերմօն » »	2006	—
8. Քէրքի » »	5410	—
9. Անդիթան » »	12039	50
10. Րէզինկա » »	125	—
11. Սամարա » »	5163	—
12. Բլնտա » »	1535	—
13. Ղըզըլ—արվատ » »	2524	30
14. Սամարկանտ » »	4500	—
15. Կօկանտ » »	9750	—
16. Չարճու » »	3205	—
17. Տաշկէնտ » »	17355	—
18. Գալօանի, Սախպի և Ռունադրէվսկայեա	1125	—
	Ռ.	Կ.
19. Օրէնբուրգ հայ համայնք	350	—
20. Սարատով » »	1835	—
21. Բուխարա » »	2000	—
22. Դաշնակ կայան » »	200	—
23. Կաշկայ » »	100	—
24. Աստրախան » »	18301	—
25. Տարիցին » »	340	—
	107,433	40
Գերիներու համար	3911	—
	<u>111,344</u>	40

Տարւոյս մայիս 23-ին Աստրախանում կայացրած որոշման համաձայն այդ գումարը այսու յանձնում եմ Արևմտահայ խորհրդին գործադրելու համաձայն նուիրատուների ցանկութեան թիւրքահայ փախստականների կրթական և որբանոցային պէտքերի համար: Գումարի հետ յանձնում եմ խորհրդիդ 26 վաւերա-

զրեր նուիրատուների ցուցակներով, և որոհեաւ մի շարք տեղերից ցուցակները դեռ չեն ստացուած և մի քանի տեղից էլ բոլորովին ցուցակ չկայ, կայարանում կամ գնացքի մէջ գրամները ինձ յանձնուած լինելու պատճառով. խնդրում եմ խորհրդից նախ՝ գումարների ստացման մասին տալ ինձ ստացադրեր, երկրորդ՝ անամիջապէս տպագրել թերթերի մէջ քաղաքների անունները հանգանակուած ընդհ. գումարներով և ապա միջոցներ ձեռք առնել ստացուած գումարների պակաս ցուցակները և մերձաւոր տպագրային առանձին տպագրել բոլոր նուիրատուների անուանացուցակները և ուղարկել տեղական մարմիններին: Մի քանի տեղերից հանգանակուած գումարները մինչև այժմ չեն ստացուած, ինչպէս Ասխարատից և Մերվիից, իսկ Կօկանաից, Չարճուից և Սամարկանդից ստացուած են ստորագրուած գումարների մի մասը: Յատուկ պարտաւորութիւն եմ դնում խորհրդիդ վրայ, դիմել հեռակեալ պարոններին գանձելու համար. — Ասխարատ՝ պ. Նիկողայոս Տէր Մկրտչեանին, Մերվ՝ պ. Գէորգ Ղարիբեանին, Կօկանա՝ պ. Հայկ Գէորգեանին, Չարճու՝ պ. Տէր Գազրիէլեանին, Սամարկանա՝ պ. Ալէքսանդր Քօչարեանին: Ի տեղեկութիւն յայտնում եմ, որ ամեն տեղ իմ հետանալուց յետոյ հանգանակութիւնը պիտի շարունակուէր, իսկ իմ ներկայութեամբ Ասխարատում ստորագրուած էր մօտ 22,000 ռ. Մէրվում՝ մօտ 22,000 ո. Կօկանաում՝ մօտ 17,000 ռ. Չարճուում չէ ուղարկել մէկ անձն՝ 500 ռ. և Սամարկանաում՝ մօտ 12,000 ռուբլի:

Հաստատապէս իմանալով, որ Սասունցի փախստականները, ծանր դրութեան մէջ են, յատկապէս խնդրում եմ խորհրդէդ՝ ընդհանուր գումարից 7433 ռուբլ. 40 կ. անամիջապէս յատկացնել այդ նպատակին:

Յոյս ունիմ, որ նորակազմ խորհուրդդ ստանալով գաղթավայրում եղող հայերի այս նպաստը կը գործադրէ վերոյիշեալ նպատակների համար, ըստ ամենայնի օգտակար եղանակով, և ես հաւատում եմ, որ հայ ժողովուրդը չի զլանայ այսուհետև ես աջակցել խոցհուրդիդ գործունէութեանս:

9 Յունիս 917 Թիֆլիս Մեսրոպ Եպիսկ.

Պորհուրդս ստանալով վերոյիշեալ գումարը՝ իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Աստրախանի թեմի հայ ժողովրդին և հանգանակութիւնը նախաձեռնող Մեսրոպ Սրբազանին:

Փախստականներու գոյութեան պահպանման և վերաշինական գործին համար Ռուսաստանէն. Ամերիկայէն և գաղութներէն խորհուրդիս անունով լինելիք գրամական բոլոր առաքումները կատարել մեր դանձապահ պ. Սերորէ Կիւլպէնկեանի հասցէին. —

г-нъ С. Гюлбенкянъ Тифлисъ — Кавказъ
 Mr. S. Gulbenkian Tiflis, Caucase, (Russie)
 Աւստոմայ խորհրդի դիւան

11 յունիս 917
 Թիֆլիս